քավօրը, փէսախպէրն ու մի քանի մտերիմ մըկըռնէրը: Կրկին զոքանչը հյուրասիրում էր սրանց շընըրկաճացավ:

Կիրակի առավոտ հարսին տանում էին տղայի տունը: Երբեմն այս լինում էր նախորդ երեկոյան, աղջկա տանը հացը վայելելուց հետո: Առավոտվանից բոլոր ճարսնէկվօրնէրը հավաքվում էին հարսի հոր տանը և նախաճաշ անելով, պատրաստվում էին ներկա գտնվելու աղջկա հոր օջախից հրաժեշտ տալուն և նոր օջախի մեջ մտնելուն: Հարսին հայրը բերում էր ձեռքից բռնած և հանձնում թäքվօրի հորը ասելով՝

«Տվա քու վօրթուտ. տար ըմմընըքըրտ՝ ավանդըղ: Խէրը տէս, բարօվ վայէլվին»:

— Սռանից յէտ մէր վօրթին ը. աչքի լüսի պէս կը պըհպանէնք,— պատասխանում էր տղայի հայրը:

Աղջիկը համբուրում էր հոր և մոր ձեռքը: Տղան այդ տան բոլոր հասակավորների ձեռքերն էր համբուրում և կանգնում նորահարսի կողքին: Այս հեռանալուց առաջ աղջիկը, շատ դեպքերում փեսան էլ, համբուրում էին իրենց օջախի, թօրէնի շուրթը, և նորապսակների զույգը ուղեկորվում էր տղայի տունը կրկին զուռնա-դավալավ, երգ ու պարով, մըկըռնէրավ շրջապատված, կրկին թագուհին գնում էր թագավորի ետևից, ճարսնէքուրը բռնած էր ունենում տղայի փեշից ձգած նորահարսի կրծքի առջև, որ ոչ ոք միջով չանցնի: Կրկին աղջիկը միշտ տղայի ետևից գնալով՝ ցույց էր տալիս, որ կապված է նրա հետ և պիտի նրան հնազանդվի: Կրկին ճանապարհին բարեկամների տներից թիքա էին դուրս բերում: Եկեղեցու մոտից անցնելիս նորապսակները դուռը համբուրում էին: Եթե տղայի տունն էին գալիս ձիով, երկուսն էլ պիտի ձիուց իջնեին արևելյան կողմից:

Այդ գնացքից առաջ արդեն ճարսնախպէրը աղջկա օժիտը բերած էր լինում: Նա ձիուց չէր իջնում, մինչև որ տղայի տանեցիք բերելու համար մի որևէ նվեր իրան չտային:

Քանի որ նոր զույգը կոչված է բեղմնավոր լինելու և հատկապես տղաներով տունը լցնելու և այդպիսով ընտանիքի աշխատող ուժի թիվն ավելացնելու, իսկ նորահարսը բացի այդ պիտի լիներ ժիր տնտեսուհի, հարսանեկան ծիսակատարությունների մեջ ամեն առիթով դիմում էին այնպիսի մոգական՝ հմայական միջոցների, որոնք նպատակ ունեին նորապսակների մեջ համապատասխան ունակություններ զարգացնելու: Երբ հարսանեկան հանդեսը մտնենում էր տղայի տան դռանը, նոր զույգի գլխին մի բարձր տեղից՝ սովորաբար կտուրից, շաղ էին տալիս ընկույզ, կաղին, կտօղէն, շագանակ, պտուղներ, որոնք մըկըռնէրը ու երեխաները իրար ձեռքից խլխլում էին: Հավատում էին, որ դրանք իրենց մեջ բեղմնավորելու և բազմանալու ուժ են պարունակում[46]: Սկեսուրը դուրս էր գալիս դիմավորելու յուղի պուլիկը ձեռքին, երեք անգամ պտույտ էր գալիս նոր զույգի շուրջը, իբր թե իրան մատաղ է բերում նրանց երկարակեցությանը: Երբեմն նրանց ոտքի տակ պառկեցնում էին մի ոչխար և հաճախ հենց այդտեղ էլ մորթում: Վերջին դեպքում էլ արյան մեջ թաթախում էին գրպանի դանակը և լեզվակը ծալում, որպեսզի ապահովված լինի տղայի առնական ընդունակությունը: Այս մատաղավ տունը պիտի պահպանվեր չարիքից և տան ոգիները պիտի սիրաշահվեին: Սկեսուրը յուղի պուլիկը առաջարկում էր հարսին, որպեսզի սրա գալովը տան յուղը

[46] Այլ հայաբնակ վայրերում շաղ են տալիս նաև ցորենի հատիկներ: